«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

23 Դեկտեմբերի 2021, N 7 - 12

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ «ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ, ԳԻՏԵԼԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԵՐՈՒՄ» ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով 2021-2022 ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակներում «Առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրոսական կրթական ծրագրերում ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության կազմակերպման կարգերում» փորձառության գնահատման առնչությամբ ժամանակավոր փոփոխություններ կատարելու մասին հարցը, **արձանագրելով,** որ փոփոխությունների առաջարկը քննարկվել և հաստատման է երաշխավորվել գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի դեկտեմբերի 16-ի N 3 նիստում, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

2021-2022 ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակներում «Առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրոսական կրթական ծրագրերում ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության կազմակերպման կարգերում» կատարել հետևյալ ժամանակավոր փոփոխությունները.

1. Սահմանված կարգով լրացված, փորձառության վայրից նշանակված ղեկավարի ստորագրությամբ վավերացված օրագրերի ներկայացման և փորձառություններին ուսանողի հաճախումների հաշվառման պահանջը **չկիրառել** 2021-2022 ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակներում 1,5 տարի ուսման տևողությամբ առկա ուսուցման մագիստրատուրայի և 2 տարի ուսման տևողությամբ հեռակա ուսուցման մագիստրատուրայի կրթական ծրագրերով գիտահետազոտական փորձառությանը մասնակցած և մասնակցող ուսանողների նկատմամբ:
2. 2021-2022 ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակներում 1,5 տարի ուսման տևողությամբ առկա և 2 տարի ուսման տևողությամբ հեռակա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողների գիտահետազոտական փորձառության՝ **«փորձառության վայրի հաճախումներ»** բաղադրիչը (**4 միավոր**) միացնել

«փորձառության պաշտպանություն» բաղադրիչին և փորձառության գնահատման **20** միավորանոց համակարգում գնահատման բաղադրիչներ սահմանել՝

1) **«փորձառության հաշվետվություն»՝ 4 միավոր**,
2) **«փորձառության պաշտպանություն»՝ 16 միավոր**:

3. Հանձնարարել ֆակուլտետների դեկաններին՝ 2021-2022 ուսումնական տարվա առաջին կիսամյակում արդեն իսկ փորձառությունն ավարտած 1,5 տարի ուսման տևողությամբ առկա ուսուցման մագիստրատուրայի ակադեմիական խմբերի ամփոփաթերթերում կատարել համապատասխան փոփոխություններ՝ միմյանց գումարելով «փորձառության վայրի հաճախումների» և «փորձառության պաշտպանության» բաղադրիչների մասով ուսանողների համապատասխանաբար՝ 4 միավորի և 12 միավորի միջակայքերում ստացած գնահատականները:
4. 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում առկա ուսուցման բակալավրիատի 4-րդ և հեռակա ուսուցման բակալավրիատի 5-րդ կուրսերի ուսանողների ուսումնաարտադրական փորձառության, ինչպես նաև 2 տարի ուսման տևողությամբ առկա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողների գիտահետազոտական փորձառության **20** միավորանոց համակարգում գնահատման բաղադրիչներ սահմանելու իրավասությունը վերապահել համալսարանի ռեկտորատին:
5. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

2021 թ. դեկտեմբերի 23
Երևան